



**Վ.Ս. Աուդիտ**  
**В.С. Аудит**  
**V.S. Audit**

**ԱՆԿԱՆ ԱՌԴԻՏՈՐՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**«Արցախ ՀԷԿ» ՓԲԸ բաժնետերերին**

Մենք ստուգել ենք «Արցախ ՀԷԿ» ՓԲ Ընկերության հաշվապահական հաշվառման հաշվեկշիռը առ 31-ը դեկտեմբերի 2007թ., 2007թ. տարեկան ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ինչպես նաև առ 01 մայիսի 2008թ. հաշվապահական հաշվառման հաշվեկշիռը: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը:

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք, ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր հաստատմանն էր ներկայացվել «Արցախ ՀԷԿ» ՓԲ Ընկերության առ 01.05.2008թ. հաշվապահական հաշվեկշիռ:

2008թ. մայիսի 1-ի դրությամբ Ընկերության Հաշվապահական հաշվեկշիռ ըստ հոդվածների ներկայացվում է.

հազ. դրամ	
Ակտիվներ	
1. Հիմնական միջոցներ	5096241
2. Ոչ նյութական ակտիվներ	2000
3. Նյութեր	2497
4. Արագամաշ առարկաներ	5
5. Տրված ընթացիկ կանխավճարներ	30965
6. Դեբիտորական պաշտքեր գնումների գծով	11098
7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8410
ԸՆԴԱՄԵՆՆԸ	5151216



Վ.Ս. Աուդիտ  
B.C. Аудит  
V.S. Audit

Պասիվներ	հազ. դրամ
1. Կանոնադրական կապիտալ	36083
2. Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	5050903
3. Կուտակված շահույթ	36162
5. Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	5590
6. Կարձաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	14893
7. Կարձաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	3091
8. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցներին այլ հատուցումների գծով	4438
9. Այլ կրեդիտորական պարտքեր	56
<b>Ընդամենը</b>	<b>5151216</b>

Մեր կարծիքով «Արցախ ՀԷԿ» ՓԲ Ընկերության հաշվապահական հաշվեկշիռը առ 31 դեկտեմբերի 2007թ. և 2007թ. տարեկան ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ինչպես նաև առ 01 մայիսի 2008թ. հաշվապահական հաշվառման հաշվեկշիռը տալիս են Ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը:

«Արցախ ՀԷԿ» ՓԲ Ընկերության ղեկավարության կողմից կայացրած որոշումները և հրամանները կապված ընկերության ֆինանսական գործունեության հետ բխում են ԼՂՀ Կառավարության որոշումներից, ինչպես նաև ԼՂՀ գործող օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից:

Տնօրեն Աուդիտոր

23.05.2008թ.



Վ.Գևորգյան